

ՍՈՒՏ ԿԸ ԽՕՍԻ՞Մ ՍՈՒՏ ՎԿԱՆԵՐՈՒՄ ՄԱՍԻՆ

Այս մեկը անաստուածաբար սուտ վկայութիւն ընողներուն համար է: Այս մասին Աստուած խօսելով Մովսէսի հետ, Օրէնքի մէջ գրեց. «Սուտ մի՛ վկայեր» (Ելք. Ի. 13), ինչ որ մեծ անօրէնութիւն է:

Առաջին՝ ահեղ ու սուկալի իրողութիւնը այն է, որ ճշմարտութիւնը Աստուածոյ անունն է եւ ամէն բանի զարդն ու աշխարհի պայծառութիւնն է. սուտ վկան աւերիչ ու կործանիչ է ճշմարտութեան, որովհետեւ կը վկայէ ոչ իր տեսածին եւ ոչ ալ գիտցածին մասին:

Երկրորդ, ուրիշներու մեղքերու ընկեր կ'ըլլայ եւ զանոնք կը հաստատէ իրենց գործած մեղքին ու չարիքին մէջ եւ ինք սատանային բնակարանը կ'ըլլայ, ինչպէս Տէրը ըսաւ. «Ան, որ սուտ խօսի, ինքն իրմէ կը խօսի սուտը»: «Ինքն իրմէ»-ն այն է, որպէս թէ Աստուած կ'ըսէ. «Սուտը իմս չէ, այլ՝ սատանային, եւ սատանան է անոր հայրը, որ ծնաւ սուտը» (Յովհ. Ը. 44) եւ ամէն սուտ վկայ մասնակից է սատանային:

Բոլոր ստախօսները երէ եւ չդառնան ու չապաշխարեն, սատանային հետ տանջանքի եւ կորուստի պիտի մատնուին, համաձայն այն խօսքին, թէ «Տէրը կը կորսնցնէ բոլոր սուտ խօսողները» (Սղ. Ե.7): Ճշմարտախօս բերանը Ս. Հոգիին դրուն է, իսկ ստախօս բերանը դժոխքի դրուն է եւ դեւերու մուտք: Հետեւաբար, ձեր բերանը ճշմարտութեան վարժեցուցք, որպէսզի Ս. Հոգիին բնակի ձեր մէջ:

Յովհաննէս Երզնկացի

ԳԵՂԱՐԴ

Սրբութիւն մը, որ կը գտնուի Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Աղէք եւ Մարի Մանուկեան գանձատան մէջ: Գեղարդը սրածայր երկարեայ այն նիզակն է, որ Քրիստոսի խաչելութեան պահուն հոռմէացի զինուոր մը Անոր կողը իրեց: Յովհաննէս Աւետարանիչ վկայելով այս դէպքը կ'ըսէ. «Զատիկի նախորդ օրն էր: Տրեայ ղեկավարները չուզեցին, որ մարմինները խաչերուն վրայ մասն ծաբաթ օրով, քանի այդ ծաբաթը տօնական մէծ օր մըն էր: Ուստի Պիղատոսէն խնդրեցին՝ որ խաչեալներուն սրունքները կոտրեն եւ մարմինները մէշտեղին վերցընեն: Չինուրները եկան եւ առաջինին սրունքները կոտրեցին, նոյնպէս ալ միւսին՝ որ Յիսուսի հետ խաչուած էր: Բայց երբ Յիսուսի եկան տեսան, որ անիկա արդէն իսկ մեռած էր, ուստի չկոտրեցին անոր սրունքները: Սակայն զինուրներէն մէկը նիզակը անոր կողը իրեց, եւ անմիջապէս արիւն ու ջուր հոսեցաւ»:

Սրդարեւ Քրիստոսի արեամբ օծած այս սրբութիւնը կ'ենթադրուի, որ Ս. Թաղէոս Առաքեալ իրեն հետ բերաւ Հայաստան՝ իր նուիրական առաքելութիւնը կատարելու ընթացքին:

Սրբալոյս Միւռոնի օրինութեան ացնեն, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, Ս. Խուանուրիչ հայրապետի Սղին հետ նաև Գեղարդով Սուրբ Միւռոնը կը խառնէ:

ՀԱՅԱՑ

ԱՐՍԳ ՇԱԲԱԺՄԵՐԸ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud,
P.O.Box 80810 - Tel/Fax:01-258300 - facebook-h.kz/jerak Ձրագ թերը



ՁՈՒ ԽՈՍՔ Ի Խ ՈՅԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՐ Խ ԸԿԻՇԵՐՈՒՄ ԼՂՅԱ
(Սղ. 119.105)

ԺԴ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 2 ՄԱՅԻՆ 2021

ԹԻՒ 18

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Գրձ. 17.1-15: Ա. Յհ. 1.1-10

ՅԻՍՈՒՄ ԳՐԻՍՏՈՍԻ ԱԽԵՏԱՐԱՆԸ ԸՆՎՀԱՆՈՒ 7.14-24

ՏՕՆ ԵՐԵՒՄԱՆ Ս. ԽԱԶԻՆ

Տաղաւարահարաց տօնակատարութեան մօտաւրապէս կէսին, Յիսուս տաճար ելաւ եւ սկսաւ ուսուցանել: Հրեաները կը զարմանային եւ կ'ըսէին. «Ինչպէ՞ս այս մարդը Սուրբ Գիրքերը զիտէ, երբ բնաւ չէ ուսած զանոնք»:

Յիսուս պատասխանեց անոնց. «Ինչ որ ձեզի կ'ուսուցանեմ՝ իմ վարդապետութիւնս չէ, այլ՝ անորը, որ զիս դրկեց: Ով, որ կ'ուզէ Աստուծոյ կամքը կատարել, պիտի հասկնայ թէ Աստուծմէ՝ է այս վարդապետութիւնը, թէ ես իմ հեղինակութեամբ կը խօսիմ: Ան որ իր հեղինակութեամբ կը խօսի՝ իր անձին համար փառք կը փնտուէ, իսկ ան որ զինք դրկողին փառքը կը փնտուէ, ճշմարիտ է եւ խարեւութիւն չկայ անոր մէջ: Մովսէս ձեզի Օրէնքը չսուսա՞ն, սակայն ձեզմէ ոչ ոք կը հնազանդի Օրէնքին: Ինչո՞ւ կ'ուզէք զիս սպաննել»:

Ժողովուրդը պատասխանեց. «Դիւահա՞ր ես, ի՞նչ ես: Ո՞վ կ'ուզէ քեզ սպաննել»:

Յիսուս պատասխանեց. «Հրաշք մը գործեցի եւ բոլորդ վրուվեր էք: Մովսէս հրահանգեց թվաստել ձեր զաւակները - թէեւ Մովսէս չէր սկսողը, այլ ձեր նախահայրերը - եւ դուք ձեր զաւակները կը թվաստէք Շաքար օրով: Երէ մէկը կը թվաստէք Շաքար օրով, որպէսզի չընկանուի Մովսէսի Օրէնքը, ինչո՞ւ զայրացած էք ինձի դէմ, որովհետեւ մէկը ամրողութեամբ բժշկեցի Շաքար օրով: Երեւյթներէն մի դատէք, այլ արդար դատաստան կատարեցէք»:

ՀԱՄԱՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԽՆԴՐԱՆՔ

Յիշէ՛ Տէր, քեզի ծառայողները. Մեր ծնողները, ուսուցիչները, եղբայրներն ու քոյրերը, ընկերները, մեզ կերակրողները, ուխտաւորները, ճամբորները, մեզ հանգստացնողները, վաստակաւորները, խոստովանողները, ապաշխարողները, գերիները, հիւանդները, նեղեալները, իշխանութեան գլուխ գտնուողները, մեզի չարիք ընտղները, բարերարները, թշնամիները, մեզ ատողները. եւ անոնք որոնք հաւատքով դաստիարակեցին մեզ:

ՍՈՒՐԱԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ՏՕՆ ԵՐԵՒՄԱՆ Ա. ԽԱՉԻ



Յինանց հինգերորդ Կիրակին կը կոչուի Երեւման խաչ եւ յիշատակն է Երուսաղեմ խաչի նշանի Երեւմանին:

7 Մայիս, 351-ին Կիրեղ Երուսաղեմացի հայրապետի ժամանակ, Երուսաղեմի մէջ օր ցերեկով Երկինքի վրայ կ'երեւի խաչի նշանը՝ Գողգոթային միջներ Զիբենեաց լեռը: Լուսապայծառ խաչի նշանը կ'երեւի բոլորին: Ի տես զարմանահրաշ այս երեւյթին, ժողովուրդն ու եկեղեցականները եկեղեցի կը մտնեն Աստուծոյ գոհութիւն եւ փառք մատուցանելու համար:

Կիրեղ եպիսկոպոսը զարմանահրաշ այս դեպքը կը տեղեկացնէ Բիւզանդիոնի Կոստանդիանոս Կայսեր, եւ անոր կը խրախուսէ Քրիստոնէական իր ամուր հաւատքին համար: Կիրեղ հայրապետի վերոյիշեալ գրութիւնը քարգմանուած է հայերէնի եւ կ'ընթերցուի Երեւման Խաչի տօնի օրը:

Երեւման Խաչի սրբոյ տօնը յատուկ է միայն հայերուն եւ յոյներուն: Կաթողիկէ եկեղեցին այս անունով խաչի տօն չունի:

Երեւման խաչի տօնը յատուկ շարական չունի, այլ՝ նոյն օրը կ'երգեն խաչի միւս տօներու շարականները, որոնցով կը փառարանուի խաչը:

ՅԱՐՅՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ ԲԱԺԻՆ

ՈՎ Ե ՂՋԵԱ ՄԱՐԴԸ

- Այն մարդը՝ որ բարեկամ չունի:
- Այն մարդը՝ որ զինք դատապարտող խիղն չունի:
- Այն մարդը՝ որ անձը զապելու անկարող է:
- Այն մարդը՝ որ անձնասէր է:
- Այն մարդը՝ որ նկարագիրը դրամի հետ փոխած է:
- Այն մարդը՝ որում կինը եւ ընտանիքը զինք չեն սիրեր:
- Այն մարդը՝ որ յոյսը եւ հաւատքը կորսնցուցած է:
- Այն մարդը՝ որ Յիսուսը իրեն բարեկամ չէ ըրած:
- Այն մարդը՝ որ Ս. Գիրք չունի ու ատով չի միհիթարուիր:
- Այն մարդը՝ որ Երկինքը գանձ չէ դիզած:
- Այն մարդը՝ որ ուրիշին տալիք չունի:
- Այն մարդը՝ որ չի կրնար բարիով յաղթել չարին:

ԼՈՒՍՈՎԴ ԳՈ ՔՐԻՍՏՈՍ

Լուսովդ քո Քրիստոս, ամենենեան լուսաւորեցաք, եւ ի առք խաչ քո, փրկիչ, հաւատացեալքս ապաւինեցաք: Լուր մեզ, Աստուած փրկիչ մեր. տուր մեզ զինաղաղութիւն քո, եւ արա առ մեզ գողորմութիւն քո, մարդասէր Տէր:

Քու լոյսովդ, Քրիստոս ամենէս լուսաւորուեցանք եւ հաւատացեալներս Փրկիչ, քու սուրբ Խաչիդ ապաւինեցանք: Լսէ մեզ, Աստուած՝ մեր փրկիչը, քու խաղաղութիւնդ տուր մեզի, եւ քու ողորմութիւնդ շնորհէ մեզի, մարդասէր Տէր:

ՀՈԳԵՒՈՐ ՊԱՏ ԳԱՍ

ԱՍՏՈՒԱԾ ՃԻ ԼՐԵՐ ՄԵզ ԿԵԱՆՔԻ ՎԻՌԵՆՐԿԱԼԻԾ ՊԱՍԻԿՈՒՆ

Ճիմա փորձենք պարզապէս քանի մը փաստեր ներկայացնել, որով կարելի ըլլայ ապացուցանել, որ Աստուած մեզ կը սիրէ մեր ծնողներէն աւելի: Առաջին, Երկրաւոր ծնողներ սաստիկ նեղութեան ժամանակ կրնան լրել իրենց զաւակները, իրենց սեփական մորթը փորկելու համար, իսկ Աստուած ճիշդ հակառակը, նեղութիւններու ժամանակ, առաւել եւս կը մօտենայ մեզի եւ կը զգացնէ իր մխիթարար եւ պաշտպանարար ներկայութիւնը: Ասոր գեղեցկագոյն օրինակը Յիսուս տուաւ երբ ըսաւ. «Քանի անգամ ուզեցի որդիներդ հաւաքել, ինչպէս հաւը իր ձագերը կը հաւաքէ թեւերուն տակ» (Ղկ 13.34):

Գիտենք, որ երբ թեթեւ փորթորիկ մը ըլլայ, հաւը թեւերը կը բանայ, որպէսզի ձագերը զան եւ տակը մտնեն, բայց միւս կողմէ գիտենք նաեւ, որ երբ փորթորիկը սաստկանայ, եւ մանաւանդ, երբ փորթորիկին որոտում ընկերանայ, հաւը իսկոյն կը լրէ իր ձագուկները եւ կը փախչի:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼԻՔ ՀՈԳԵՒՈՐ ԴԱՍԸ:

Գստահ ըլլալ, որ նեղութեան ժամանակ ապահով Զեռքերու մէջ ենք: Փառք Քեզ Աստուած մեր:

ԵԹԵ ԿԱՄ ԵՐԱ ԿՌՈՒՁԵՍ...

ԵԹԵ ԿՈՒԶԵՍ ԳԻՏԱՎ, ԹԵ ԱՍՈՒՎԾ Ի՛ՄՉՊԻՍ ԿԲ ՊԱՇՏՊԱՅԱ ԱՐԴՎՐ՝ Կարդա՛ ՍՑՂՄՌՈ 17

Ո՞վ ՏԵՌ, լսէ՛ արդար բողոքս, մտիկ ըրէ աղաղակս, ականջ տուր աղօթքիս, որ նենգաւոր շրթներէ չի գար: Դատավճիռս դո՛ն տուր, տես իմ ուղիղ ըլլալս: Դատավճիռս դո՛ն տուր, զիշեր ատեն եկար եւ փորձեցիր սիրոս, կրակով քննեցիր եւ շարութիւն չգտար մէջս, ո՛չ ալ բերնիս մէջ անիրաւութիւն: Տեսայ մարդոց գործերը, բայց քու խօսքին հետեւլով՝ հեռու մնացի արինահեղ մարդոց ապրելակերակէն: Քայլերս քու շալիներուդ մէջ պահէ, որպէսզի ընթացքս չենիլ: Ես քեզ կը կանչեմ, որովհետեւ զիտեմ թէ պատասխան պիտի տաս, ո՞վ Աստուած, ականջդ ինծի խոնարհեցուր, լսէ՛ խօսքերս: Սքանչելի կերպով ցոյց տուր քու սէրդ, դուն՝ որ քեզի ապահնողները քու աջովդ կը փրկես իրենց հակառակորդներէն: Աչքի բիրի պէս պահէ զիս պահանձէ ամբարիշտներէն, որոնք կեանքիս կը սպառնան. մահացու թշնամիներէս, որոնք պաշարած են զիս: Իրենց հարստութեան վստահած, եւ գութը մոռցած՝ ամբարտաւանութեամբ կը բանան իրենց բերանը: Ահա կը հետապնդէն զիս, եւ զիս պաշարած՝ ակնդէտ կը հետեւին ինծի, զիս գետին տապալելու համար, առիծի մը պէս՝ որ կ'ուզէ բզկտել, կորինի մը պէս՝ որ դարան մտած կը սպասէ: Ե՛լ ո՞վ ՏԵՌ, անոնց ճամբան կտրէ, զաննք տապալէ՛: Քու սուրովդ կեանքս փրկէ՛ ամբարիշտներու ձեռքէն: